

ԻՆՏԵՐՈՒԳՆԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց կորագրատան միջ:

() Կարագրագրի գրվում են ուղղակի
Тифлис. Редакция „Менк“

Կորագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լիգուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Բաղդաւոր հետեանք:—Ներքին տեսու-
թիւն: Նամակ Մեծ-Վարաքիտից: Ներքին լու-
րեր: Արտաքին տեսուչութիւն: Գերմանիա:
Պ. Մարտիրոս Սէմերճի:—Մշակիչ հեռագրիչներ:
—Հայտարարութիւններ: — Բանասիրական
խնկեր:

ԲԱՂԴԱՒՈՐ ՀԵՏԵԱՆՔ

Ընթերցողներին յայտնի է որ-
քան աշող եղաւ յօգուտ Վանի
սովատանջների մեր ձեռքով լու-
կած հանգանակութիւնը: Մի
ամսվայ մէջ մենք կարողացանք
հաւաքել յօգուտ թիւրքաց Հա-
յաստանի սովատանջների 16,000
րուբլ: Ռուսաստանի բոլոր հայա-
բնակ տեղերից մեր հրաւերը օգ-
նել Վանի մեր եղբայրներին ջերմ
արձագանք գտաւ և բոլոր հայերը
շտապեցին իրանց լուծանքը գցել
ազգային գանձանակի մէջ:
Բայց այդ նիւթական աշողու-
թիւնը միակ բաղդաւոր հետե-
անք չէր մեր արած հրաւերի.
կայ և մի ուրիշ բարոյական հե-
տեանք, որ նշմարելի եղաւ մեր

Ի Ե Ն Թ Ը

ԱՐԿԱՇՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍՊՈՒՐԲԱՎԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅՍՏԱՆՆՈՒՄ

—
ժ.Չ.

Փորձանք խուճերով է գալիս, երբ կամենում
է խաւարացնել մի խաղող ընտանիքի բարօրու-
թիւնը: Ամէն կողմից զգրատութիւնը սկսել էր
պաշարել ձերուսի խաչի տունը, ամէն կողմից
սպառնում էին նրան դանազան տեսակ վտանգներ:
Վարդանի կուրծք թօմաս էֆէնդու հետ ծանր
պարտութիւն գործեց ամբողջ ընտանիքի վրա:
Տանեցիկներից ոմանք խօսում էին և ծիծաղում էին
էֆէնդու երկնային թեան վրա և զովասանում էին
Վարդանին, իսկ ոմանք մեղադրում էին նրան, ա-
սկով, որ նա խնկի է և իր լեզուն պահել չը գի-
տէ: Առաւել զայրացած էին Վարդանի գէտ խա-
չի որդիներից մի քանիսը, Օմանը և Յակօն: Նը-
րանք ասում էին, թէ ինչպէս կարելի է կառա-
վարութեան մարդուն այնպէս խայտառակել: Կա-
ռավարութեան մարդը ոչ միայն իր պաշտօնակա-
տարութեան ժամանակ, այլ և մասնաւոր կենցաղի
մէջ, նրանց կարծիքով, պաշտօնական նշանակու-
թիւն ունէր, նրան հակառակել անկարելի էր:
Ոչ սակաւ անհանգիստ էր և ձերուսի տանու-
տէրը: Նա թէ և չէր մեղադրում Վարդանին, բայց
որքան էլ իրաւացի լինէր նա, այսուամենայնիւ,
նրա վարմունքը էֆէնդու վերաբերութեամբ ան-
պատշաճ էր համարում: Գերուսի խաչօն լաւ էր
ձանաչում էֆէնդու հօգին. այդ հին շարագործը
պիտի աշխատէր վրասել Վարդանին, և եթէ վը-
նասել չը կարողանար, նրան շատ հեշտ էր իր վը-

նուսաստանցի հայերի ազգային
կեանքի մէջ:
«Մշակի» ինն տարվայ ընթաց-
քում յայտնած գաղափարները
ներկայ ճգնաժամի մէջ ընդունե-
լութիւն են գտնում, մեր թեր-
թի ցանած սերմը ընկաւ պողա-
բեր հողի վրա:
Ինն տարի շարունակ մենք ա-
մէն ջանք էինք անում ապացու-
ցանելու, որ հայոց ազգը բաղկա-
ցած չէ միայն հայ-լուսաւորչա-
կաններից, այլ հայ-բողոքականները
և հայ-կաթօլիկները նոյնպէս մեր
ընտանիքի հարազատ անդամներ
են:
Եւ ահա ազգի այդ ծանր
ճգնաժամի ժամանակ մեր աւե-
տարանական և կաթօլիկ եղբայր-
ները ուզեցին ապացուցանել որ
իրանք էլ բաժանում են մեր այս-
քան տարվայ ընթացքում յայտ-
նած մտքերը, որ իրանք էլ չը
նայելով, որ ուրիշ դաւանութեան
են պատկանում, իրանց համարում
են ամբողջ ազգի հարազատ ան-
դամներ:

բժիշկները թափել խեղճ ձերուսու տան
վրա: Կապալառուն օրինաւոր պատճառներ ունէր
մատնելու տանուտէրին կառավարութեան առջև,
նրա համար, որ իր տանը ընդունում էր Վարդա-
նի նման նշանաւոր կանտարանդիստին:
Միւս կողմից, ձերուսի խաչօն զրկվում էր մի
մեծ յայտից: Նրա մտատանջութեանը շափ չը կար,
սկսեալ այն բողեկից, երբ լսեց Վարդանի բերնից,
թէ թօմաս էֆէնդին մի քանի անգամ ամուսնացած
է եղել և զանազան տեղերում կնիկներ է թողել:
Այդ մարդու համար էր նշանակել նա իր լալային,
հիմա նրա բոլոր յոյսերը ոչնչացան: Բայց ինչով և
որպէս կարելի էր ստուգել, թէ Վարդանը ուղիղ
էր ասում: Թէ և ձերուսին նրան ստախոս չէր հա-
մարում, բայց ո՞վ է իմանում, կուրի մէջ յայտն-
ված ամէն ճշմարտութիւն կառավարութեան է թուում:
Իսկ այդ գարշելի և անասիթ կապալառուի
ինչն էր գրաւում ձերուսի խաչօնին, որ ցանկա-
նում էր իր սիրելի աղջկայ բախտը կապել մի
այնպիսի խաղաղայի հետ: Գերուսին գիտէր, որ
նա մի անգութ, անխիղճ և ցած հարստահարիչ է,
թէ նրա համար ոչինչ սուրբ բան չը կար, թէ
նա պատրաստ էր իր շահերին ամէն բան գոհել:
Այսու ամենայնիւ, ձերուսին ամէն բան մոռա-
նում էր, երբ իր առջև տեսնում էր իշխանու-
թիւն: Նա մի հին նախապաշարմունքով միշտ
պատրաստ էր խոնարհվել մոռու գիրի առջև:
Նրա կարծիքով, արքունի մուլթիզիմի, այդ փոր-
րիկ պաշտօնական մարդու մուլթիզիմի մէջ ծած-
կվում, անպայտանում և ոչնչանում էին ամէն տե-
սակ անաղուսութիւններ: Պաշտօնը սրբում էր կեղ-
տերը:
Այս պատճառով ձերուսի խաչօնի խիստ հրա-
պուրիչ էր ունենալ էֆէնդու նման մի փեսայ, որ
բարձր էր հասարակ ամբոխից, որի առջև բոլորը
խոնարհվում էին: Գերուսին որքան էլ պարզ և ար-
դարաւոր մարդ լինէր, բայց որպէս տանուտէր, որ-
պէս մի ամբողջ գիւղի գլխաւորը, ունէր իր վեր-
բիկ փառասիրութիւնները: Նա դժուար կը հաւա-
ձայնվէր իր աղջկիւր տալ մի հասարակ գիւղացու,

Հայերի մի մասի սովը, հայերի
մի մասի թշուառութիւնը միաց-
րեց ամբողջ հայերին մի ազգային
մարմնի մէջ, ստիպեց բոլոր հա-
յերի սրտերը, ընդհանուր զգաց-
մունքով ոգևորված, բաբախել ինչ-
պէս մի սիրտ...
Բաւական չէ որ աւետարա-
նական և կաթօլիկ հայերը իրանց
կարողութեան չափ սկսեցին մաս-
նակցել ընդհանուր հանգանակու-
թեան մէջ, բայց նրանք այդ
ծանր ճգնաժամի ժամանակ հրա-
պարակապէս հանդէս դուրս ե-
կան լրագրութեան մէջ, իրանց
ձայնը սովի խնդրի առիթով
բարձրացնելով տպագրական խօս-
քի միջոցով:
«Մշակի» վերջին մի քանի հա-
մարները թերթերով դուր կը տես-
նէք որ առաջնորդող յօդուածը,
օրինակ, գրված է մի աւետարա-
նական հայի ձեռքով, թղթակ-
ցութիւնը հայ-կաթօլիկի ձեռքով,
և այլն...
Ահա ազգային թշուառ ճգնա-

մանաւանդ երբ այնպիսի խորհրդաւոր պայմաննե-
րի մէջ էր պահել և մեծացրել նրան, թօմաս է-
ֆէնդու ընտրութեան մէջ նա ունէր մի ուրիշ
գործնական նպատակ ևս: Ինքը որպէս տանուտէր,
անդադար յարաբերութիւններ ունենալով տեղային
կառավարութեան հետ, էֆէնդին կարող էր շատ
գծուարութիւնների մէջ օգնել նրան: Իսկ այժմ
նրա յոյսերը միանգամով ոչնչացան...
Այդ բոլորի հետ, եթէ նրան յայտնի լինէր, թէ
ինչ վիճակ է սպանում իր սիրելի լալային քուրդ
Ֆաթիմա-բէկի կողմից, այն ժամանակ գուցէ դե-
տրակամ լալային կարող կը լինէր վերջ դնել խեղճ
ձերուսու ցաւերին: Բայց որդիները դեռ նրան ո-
չինչ չէին յայտնել: Այդ գաղտնի կակիծը ցեցի
նման ուտում և մաշում էր նրա որդիների, մա-
նաւանդ Հայրապետի և Այօի սրտերը միայն, ո-
րոնք, իրանց եղբայրների հետ ունեցած այնպիսի
խորհուրդից յետոյ, չը գիտէին, թէ ինչ պէտք էր
անել իրանց քրոջը կորուստից ազատ պահելու
համար: Ինչ կը լինէր խեղճ լալայի վիճակը, երբ
քուրդ բէկը կը յայտնակէր, կը տանէր նրան հօր
տնից. կարող էր նա մասնաւորական կին լինել,
թէ իր քրոջը Սոմայի նման իր կեանքի դառնու-
թիւնները կը վերջացնէր անձնասպանութեամբ...
Այդ բոլոր մտատանջութիւնները, այդ բոլոր
տխուր թախիծները լալայի համար էին, բայց նա
միայն էր, որ այն ժամանակ իրան ուրախ էր ըզ-
րում և իրան բախտաւոր էր համարում: Իր սի-
րած տղամարդի ձեռքից խորհրդաւոր արկղիկը
ընդունելուց յետոյ, այժմ, կարծես, նրա պարական
հագուստը այրում լինէր նրա մարմինը: Նա աղ-
ջիկ էր, ցանկանում էր աղջկայ նման հագնվել,
ցանկանում էր կին լինել... Նա դեռ զգում էր
իր չրթունքի վրա Վարդանի ջերմ համբոյրները, և
նրա ականջներին դեռ դարձում էին երկատարի
քաղցր խօսքերը: Բայց սկսեալ այն բողեկից, երբ
նա իր աշքով տեսաւ Վարդանի յարթութիւնը է-
ֆէնդու դէմ, մի մարդու դէմ, որի առջև գոգում
էր ամբողջ դաւառը, — Վարդանի նշանակութիւնը
աւելի բարձրացաւ օրիորդի աչքում: Չը գիտեմ

ժամի բաղդաւոր հետեանքը. բո-
լոր դաւանութիւնների հայերը,
մոռանալով կրօնի խտրութիւննե-
րը, զգացին թէ ցեղով, ծագումով,
արիւնով մի ընդհանուր մարմին
են կազմում...
Հայոց ազգի այդ զանազան
կրօնական կուսակցութիւնների մի
ընտանեկան մարմնի մէջ միա-
նայր, բոլորի միմեանց մէջ հա-
սարակական համերաշխութիւնը,
առանց կրօնի խտրութեան, —
մեզ համար ամենամեծ վարձա-
տրութիւն է ինն տարվայ ըն-
թացքում մեր արած ջանքերի
համար:
Ազգային դժբաղդութեան պատ-
ճառով կարելի է ասել, հաստատ-
վեցաւ այլ և այլ դաւանութիւն-
ներին պատկանող հայերի մէջ ազ-
գային միութիւնը:
Այն, ինչ որ մենք քարոզում
էինք ինն տարի շարունակ, իրա-
գործվեցաւ մի ամսվայ մէջ:
Այժմ մենք կարող ենք ասել,
որ մեր ապագայ լրագրական գոր-

ինչու կնիկները սիրում են ազամարդի մէջ տես-
նել մեծութիւն, դերազանցութիւն և զօրութեան
անհամեմատ առաւելութիւն: Նրանք հիանում
են, երբ տղամարդի մէջ նկատում են մի յատկու-
թիւն, որ բարձր էր կանացի ուժից: Վարդանը
պաշտելի դարձաւ լալային, երբ իր գործութեան
ներքոյ ճնշեց, ոչնչացրեց կարտ կապալառուին,
որին լալան բոլոր սրտով ատում էր: լալային
շատ անգամ պատահել էր համբերել այդ անասի-
թի լրբութիւններին, և ամէն անգամ, երբ նա իր
հօր տունն էր գալիս, նա միշտ աշխատում էր
փախչել և թաղանթ նրանից, բայց հայրը դար-
ձեալ կանչել էր տալիս նրան, որ էֆէնդու համար
չիրօլն պատրաստէ, որովհետև նրա ձեռքով պատ-
րաստված չիրօլը համով էր լինում...
Լալան օղայի մէջ տեսած և լսած բոլոր բանե-
րը պատմեց իր երէց եղբորը Հայրապետին, թէ
որպէս վարվեցաւ Վարդանը էֆէնդու հետ:
—Շատ լաւ է արել, պատասխանեց Հայրապե-
տը, պէտք է սատակացնէր այն գարշելին, սովո-
րել է խեղճ դիւղացիներին տանջել, կարծում է,
թէ ամէն մարդ նրանց նման կը լինի:
Լալան պատրաստվում էր իր եղբոր պարանո-
ցին փաթաթվել և նրա առջև բաց անել իր սիրտը,
բոլորը պատմել նրան, թէ ինքը սիրում է, վա-
րդաց սիրում էր Վարդանին, և խնդրել, որ նա
այդ մասին խօսէ իր հօր հետ: Բայց Հայրապետը
շուտով տնից դուրս գնաց, կարծես, մի շատ հար-
կաւոր գործ դրսում սպասում էր նրան:
Նրա կինը Ստանայի այսօր պէտք է տեսութիւն
ունենար Ֆաթիմա-բէկի կնոջ խորհրդի հետ:
Վաղ—առաւօտեան յայտնվեցաւ Ջաւուն և ասաց,
թէ իր տիկինը ուխտագնացութեան պատրուակով
պիտի գայ Օ... գիւղին մերձաւոր հին մատուռի
մէջ ժատաղ կարելու, որովհետև նրա փոքրիկ որ-
դին հագում էր, և նշանակել է այնտեղ տեսու-
թիւն Ստանայի հետ: Այդ մատուռը հաւասար կեր-
պով պաշտվում էր թէ քրդերից և թէ հայերից:
Ստանայի շատ ուրախացաւ, կըր տեսաւ, որ խոր-
չիղը կատարել է նրա ցանկութիւնը, որովհետև

ՃՈՒՆԷՐԹԵԱՆ ԱՆՉ ՀԱՍՏԱՌԱՆ ՀՅՈՒՆԵՐ զԳՐՈՒՄ ԸՆԴՈՒՄ ԸՆԴՈՒՄ ԸՆԴՈՒՄ

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵՆՎԱՆԻՍՏՅԱՆ

28 փետրվարի

Վանի Ազգայնական ճեմարանի տակից արմատներ որոնող սովադական ճեմարանը, այրիացեալ մոր ոտքերի տակ սովադական անչնչացող անմեղ երեխաների վերջին հառաչանքը, — շատ խոր թափանցեցին դարաքրիստոնցիների զգայուն սրտերում, որոնք «Վանի» համարներում այդ թշուառների աղի արտասուքը տեսնելով, չը խնայեցին իրանց արդար վաստակից մի մի փոքրիկ բաժին հանել իրանց սովադական եղբայրներին:

Բարեկերտ տեղ Արևիկ հայրը «Վանի» համարներում սովադական վանի սովադական անչնչացող անմեղ երեխաները շատերի մոտ կարգադրով, շատերի գուժը շարժեց, շատերին արթնացրեց, շատերին արտասուքեցրեց, և ապա օգնական ունենալով իր հետ Ա. Սիմեոնյանին, ստորագրութիւն բացեց ժողովրդի մէջ և հասարակ հարկեր երեսուսուն իննը բուրջ: Ղարաքրիստոնցի երեխաները զարակտում էին, իրանց յարգողը մի ներկայացում տալ բայց Վանի սովադականներին ճանաչող հայ հայրիկ... աղաղակը փոխեց նրա մտադրութիւնը: Ներկայացրեց «Վանի» պիեսան, որից գոյացած հարկեր բոլորը ինչ էլ աւելացնելով յիշեալ հարկեր երեսուսունը բուրջու վրա, որ ընդամենը կանխ երկուսուհարկեր երեսուսունը իննը բուրջ, ուղարկում ենք խմբագրութեանը և խնդրում ենք բոլորը ուղարկել Վանի սովադականներին:

Հարկաւոր եմ համարում յիշել այստեղ և այն բարեբարութիւնը, որ Ղարաքրիստոնցի ժողովուրդը մի ընկերութիւն կազմելով, շարաքրիստոնցի մի ուրոյ տուրք վճարելով, պահպանում է իր տեղական շքանշաններին ևս: Այս մասին պէտք է չնորհակալ լինել պ. Ն. Ազատանցից, որ իր անձնական գործերը թողած, ճշգրտութեամբ հաւարում է շարաքրիստոնցիներին, այլուր առնում և աղքատների վրա բաժանում: — Վերջապէս ինչու չստանում եմ հրապարակաւ իմ խորին չնորհակալութիւնը Ղարաքրիստոնցի հասարակութեան, որ

նա ինքը առաջուց ջառօի միջոցով խնդրել էր այդ տեսութեան մասին:

Բաժանվելով լալայից, Հայրապետը շատ ուրախ էր գնալ տեսնել թէ ինչ եղաւ տեսութեան հետևանքը, որ նա զուրս եկաւ գիւղից, և կէս ճանապարհի վրա նստած, մի անգուցին ժայռի հովանու ներքե անհամբերութեամբ սպասում էր Սառային, որ մատուցել պիտի վերադառնար նոյն ճանապարհով:

Խիստ հետաքրքիր տեսարան էր ներկայացնում այն տեղը, ուր նստած էր Հայրապետը: Գա մի լեռան ստորոտ էր, որ ծածկված էր ժայռերի բերկորներով, որոնք ժամանակի խորտակիչ ձեռքով ջարդ ու փշուր եղել և թափվել էին ցած: Նրա շքանշանը պատած էր վայրենի մացառներով և զանազան տեսակ թիֆերով, որոնց միջից տեղ-տեղ բարձրանում էին ծառեր: Հայրապետը ուղարկութիւնը դրաւ իր խնամքին, նա տեսաւ, որ ժիթը *) փաթկաթկալ էր նրա բունին, վեր էր բարձրացել, և աճելով, դէպի ամեն կողմ տարածել էր իր ծծի նման ոլորուն ոտերը: Նա, կարծես, աշխատում էր իր ծանրութեան ներքոյ ճնշել, խեղդողը, մաշել և միանգամայն կլանել խեղճ խնամքները, որի վերին ճիւղերը արդէն դուրսացել տերևներից դրվել և շորացել էին... Լինում են բուսակներ, որ հասարակ մարդն անգամ փրկութիւն է դառնում: «Վան» մի գեղեցիկ օրինակ, մտածում էր Հայրապետը, ա՜նա մի վայրենի բոյս, որ ինքը չէ գործում, չէ աշխատում, մայր հողի մէջ արմատներ չունի, այլ իր ծանրութեան մէջ յափշտակելով մի աւելի քաղաքակրթված և պտղատու բոյսին, ձրի կերակրվում է նրա հաշտով, ազահութեամբ ծծում է նրա հիւթը, և վերջապէս սպառելով նրա կենսական ուժերը, սպանում է նրան... Միթէ այսպէս չէ վարվում մեղ հետ քրոջը, միթէ նա էլ մի այսպիսի ժիթ է, որ ապրում է խեղճ հայի հաշտութեամբ...

*) Ժիթը պատասխաններ կամ պարագլխա- ներ է մի տեսակին է. պարագլխները կերակրվում են օտար բոյսերի հիւթով:

ամեն ժամանակ ամեն տեսակ ազգաբնու զորքերին ուրախութեամբ մասնակցում է: Ա՜նա նուրբատունների ազգանունները:

Արևիկ քանակայ Տէր-Սիմեոնյան 5 բ., Ներսէս Նազարեթեանց 3 բ., Յակոբ Նազարեթեանց 3 բ., Յակոբ Նազարեթեանց 1 բ., Սահակ Յարութիւնեանց 2 բ., Սահակ Ներսէսեանց 1 բ., Յովհաննէս Նազարեթեանց 1 բ., Նահայեան Ազատանց 3 բ., Յովհաննէս Տ. Բաղդասարեանց 1 բ., Տիկին Զաւակիր Տ. Սիմեոնեանց 1 բ., Ղարաքրիստոնցի 5 բ., Տիկին Սանուհի Միրզախանյան 1 բ., Աւետիս Միրզախանյան 3 բ., Գարսևան Ջալալեանց 1 բ., Խեչոյ Արդեանց 5 բ., Յովակիմ Նազարեթեանց 3 բ., Սոսի Արդեանց 3 բ., Ազգ. քանդակ Ղարաքրիստոնցի 20 բ., Անտու- ապետի օգնականը 1 բ., Աբրահամ Տ. Մովսէսեանց 2 բ., Յովհաննէս Եղջատեանց 2 բ., Սահակ Արդեանց 3 բ., Սարգիս Ազատեանց 1 բ., Ասատուր Թումանյանց 1 բ., Գեորգ Հերագեանց 3 բ., Գեորգ Խականդարեանց 2 բ., Մարգարիտ Տ. Բաղդասարեանց 1 բ., Ամիրան Օհաննիսյանց 2 բ., Խան Զուրաբեանց 1 բ., Գեորգ Խակեանց 1 բ., Յովհաննէս Արդեանց 1 բ., Գեորգ Տ. Պետրոսեանց 3 բ., Կերակոս Արդեանց 1 բ., Ազգ. քանդակ Խարայիլեան 3 բ., Ատուածատուր Տ. Միրզախանյան 1 բ., Սոսի Արդեանց 1 բ., Սիմեոն Ատուածատուրեան 1 բ., Սարգիս Շամիրեան 1 բ., Ստեփան Քուչարեանց 2 բ., Արշակ Սիմեոնեանց 2 բ., Գրիգոր Հայրիկեանց 1 բ., Մնացական Ազատեանց 1 բ., Միրզիկ Եսերեանց 1 բ., Կարապետ Նազարեթեանց 1 բ., Աղասար Պետրոսեանց 1 բ., Գրիգոր Նազարեթեանց 1 բ., Մէլք- Եղջատեանց 1 բ., Բաղդասար Նազարեթեանց 1 բ., Սողոմոն Արդեանց 40 կ., Ստեփան Տ. Ստեփանեանց 50 կ., Եզոբ Մանուկեանց 50 կ., Ազգ. քանդակ Նազարեթեանց 25 կ., Արշակ Նազարեթեանց 25 կ., Նիկողայոս Յակոբեանց 2 բ.: Պետրոս Տ. Պետրոսեանց 1 բ., Դաւիթ Արդեանց 2 բ., Պետրոս Ազատեանց (զարաքրիստոնցի) 1 բ., Յովհաննէս Աբրահամեան 10 կ., Սոսի Մարտիրոս 10 կ., Միքայէլ Տ. Յարութիւնեանց 50 կ., Ա. Սահակեանց 3 բ., Յովհաննէս Չորսպեանց 40 կ., Միրզայ Միրզախանյան 20 կ., Ռուսակ Յովսէփեանց 50 կ., Երկր Կարապետեանց 20 կ., Ասատուր Մայիլեանց 40 կ., Վանո Եղջատեանց 1 բ., Գրիգոր Ռուստամեանց 50 կ., Գրիգոր Ազատեանց 1 բ., 20 կ., Պարզիկ Հայրիկեանց 20 կ., Տ. Քալի Արդեանց 50 կ., Գեորգ Ազատեանց 20 կ., Արշակ Տ. Ստեփանեանց 1 բ., Թուման, Յարութիւնեանց 15 կ., Ազգ. քանդակ Նազարեթեանց (Պիտրիկեանցի) 1 բ., Սոսի Արդեանց 1 բ., Մնացական Ղարաքրիստոնցի (զարաքրիստոնցի) 1 բ., Գա-

րեզին Գեորգեանց 1 բ., Մարաբրոս Գեորգեանց 10 կ., Ալէք. Պետրոսեանց (զարաքրիստոնցի) 5 կ., Մացակ Ամիրեթեանց 20 կ., Արշակ Ռուստամեանց 20 կ., Ազգ. քանդակ 20 կ., Միրզիկ Արդեանեանց 20 կ., Յարութիւն Խաչատուրեանց 20 կ., Գեորգ Արդեանց 40 կ., Մարտիրոս Տ. Սիմեոնեանց 20 կ., Յովհաննէս Բոսորթեանց 10 կ., Ալէքսան Յովհաննէսեանց 10 կ., Եղջատեանց Տ. Մովսէսեանց 50 կ., Ղարաքրիստոնցի 1 բ., Ամիրան Շահնազարեանց 20 կ., Յովհաննէս Միրզախանյան 1 բ., Յարութիւն Մարտիրոսեանց 1 բ., Ասատուր Պետրոսեանց 1 բ., Ենոք Արդեանց 15 կ., Տ. Փեթրոսեանց Տ. Միքայիլեանց 1 բ., Սարրիք Տ. Միքայիլեանց 1 բ., Ռիմ 5 կ., Նիկողայոս Մայիլեանց 1 բ., Մովսէս Գուրակեանց 1 բ., Ռիմ 10 կ.: Բոլոր գումարն է երկուսուսուն իննը բուրջ, որից շուրս դառնում է 10 բուրջ փոստայի ծախս, մնում է երկուսուսուն ութը բուրջ:

Սարրիք Տէր-Սիմեոնյանի համար

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱԳՈՒԻՒՅՑ ստացանք 9 բուրջ յօգուտ Վանի սովադական Ս. Միրզիկեանցի և 1 բուրջ մատուցող Բնդամենը 10 բուրջ:

Լսում ենք որ թիֆլիսի հարուստ Յովհաննէս Միրզայի զուգորդութիւնն ունի նուրբ յօգուտ Վանի սովադական 500,000 բուրջ: Եթէ այդ յօգուտը ստացել է, ցանկալի է որ մեր միւս հարուստները հետեւին պ. Միրզային օրինակին:

Մարտի 16-ին կատարվեցաւ թիֆլիսի Սաղի վրա գտնված մի տան մէջ քաղաքի սուլտանի գահաձուլութեան թուրքերի երկուսուսունը բացման հանդէսը: Ներկայ էին վարչութեան բարձր անձինքը, քաղաքագլուխը, կովկասեան ուսումնարանական վարչութեան գլխավոր ներկայացուցիչները և նոյնպէս տեղական մամուլի ներկայացուցիչները և մի քանի տիֆլիսներ: Այդ դպրոցը հիմնվեցաւ ի յիշատակ 19 փետրվարի Բացման հանդիսում կարգապահ տեղական թուրք համայնքի վիճիւր, ներանց աղբիւրը Թաղաւոր Կայսրին և անդրկովկասեան Մուֆտիի ճառը: Այդ բոլոր զրոյթների ուսաց թարգմանութիւնն էլ կարգապահեցաւ: Գե-

Սառան սրբեց ճակատի ջրոտիքը, մի փոքր շունչ առեց, հանգստացաւ, և ապա սկսեց պատմել թէ ինչ խօսեց և ինչ լսեց քուրդ տիֆլիսից: Նրա պատմութեան բովանդակութիւնը այս էր.

Խորշիղը յայտնել էր, թէ բէկը այժմ շատ չէ մտածում Ստեփանիկի մասին, թէ նա զարգացած է այնպիսի ծանր հոգեբանով, որ առժամանակ զոհ է նրան մտածել ևս տուել Ստեփանիկի սէրը: Նա ասել էր, թէ բէկը հրահանգներ է ստացել Արդեանցի վարից և այժմ ինչ—որ պատրաստութիւններ է տեսնում,—իւր ցեղի աղամարդերի անձնահամարն է հաշվում, նրանց զենքեր է բաժանում, փող է տալիս, որ իրանց համար ձեռներ առնեն, հազուադէպ պատրաստեան և այլն:—Բայց թէ ինչ ձեռնարկութեան համար են այդ պատրաստութիւնները, ինքը խորշիղը չը գիտէ: Միայն նա դարձեալ խորհուրդ է տալիս, որ Ստեփանիկին կամ մի հեռու տեղ փախցնեն և կամ շուտով մի մարդու հետ առուստացնեն, որովհետեւ ինքը հաստատ գիտէ, որ բէկը վերջնական կը կատարէ իր մտադրութիւնը խեղճ աղջկայ մասին: «Թէ և, աւելացրել էր տիֆլիսը, ես այդ մասին խօսել եմ իմ հօր հետ, թէ և իմ հայրը խոստացաւ սանձ դնել բէկի կրքերին, բայց ինքը, խորշիղը, շատ չէ հաւատում բէկի խոստմաններին, և գոյց է գործը այն հետևանքը կունենայ, որ ինքը ստիպված կը լինի թողնել իր ամուսնի տունը և բաժանվել նրանից»:

Հայրապետը խորին ուղարկութեամբ լսում էր Սառայի պատմութիւնը, երբ վերջացրեց, նա ասաց.

—Գրանդով վտանգը չէ կարելի անցած համարել: Այս բոլոր պատմութեան մէջ միայն մի ուրախութիւն բան կայ, այն է, որ գործը կը յետաձգվի և մենք ժամանակ կը վաստակենք լալայի վիճակը անօրինակութեամբ:

—Ես էլ այսպէս եմ մտածում, պատասխանեց Սառան:

—Ուրեմն ինչ պէտք է անել, հարցրեց Հայրապետը:

այդ երաժշտութիւնը առեց «Воже Царя Храни» և հրերը նախաձեռնիկ նստեցին: Ուսումնարանի բնակարանը շատ փոքր է, բաղկացած է միմիայն երկու սենեակներից, որոնք տարաբար են մի երկաթեայ վառարանով: Գլուխը աշակերտները և աշակերտուհիները, ընդամենը մտաւարապէս 25 հոգուց բաղկացած, բոլորն էլ եւրոպական Ռուսաստանի թուրքերի զուգորդութեան են: Յանկալի է որ և մեր տեղական կովկասեան թուրքերը, միայն իրանց թէ նուրբեան և թէ բարոյական ոյժերը այդ դպրոցի հետ, Բայց այն ժամանակ, որ յովհետե տեղական թուրքերը քաղաքի մասնատուական ազգաբնակչութեան մեծամասնութիւն են կազմում, ցանկալի էր որ դպրոցը Սաղի տեղափոխվեր քաղաքի թուրքերի թաղը:

ԵՐԵՎԱՆԻՅ մեղ գրում են, թէ հայր Ալեքեանցի կազմած թատրոնական խումբը մի տարվայ ընթացքում տուել է եօթ ներկայացում, որից գոյացել է, բոլոր ծախսերը դուրս գալուց յետոյ, 1200 բուրջ: Գիշերը գումարը արվել է օրրոգական դպրոցին, որ նոյնպէս գտնվում է հայր Ալեքեանցի խնամատարութեան տակ: Մարտի 1-ին նոյն խումբը գարձեալ ներկայացրել է յօդուտ թատրոնական Ֆոնդի երկու փողովիներ «Ենքնապարծներ» և «Երեւնի ամուսնութիւն», բայց սրանցից «Երեւնի ամուսնութիւն» ողբերգութիւնը, զուտ արդիւնքը գոյացել է այդ ներկայացումից 148 բուրջ:

Շատ ուրախ ենք որ «ՕՅՅՈՐՅԵ» լրագիրը այժմ նոյն միտքն է յայտնում մարտի 9-ին կայացած «Հայոց զրբերի հրատարակութեան ընկերութեան» ընդհանուր ժողովի մասին, որ մենք էլ յայտնեցինք մի քանի ժամանակ առաջ: Ռուս լրագիրը նոյնպէս այն կարծիք է որ ընդհանուր ժողովի նախաձեռն, պ. Նահապետեան, չը զիտէր նախադասել, մինչև անգամ չը ծանօթացրեց ընդհանուր ժողովը ընկերութեան կանոնադրութեան հետ, չը բացատրեց ժողովին ընտրելի անձինքների պատասխանութիւնները: «ՕՅՅՈՐՅԵ» յայտնում է և այն միտքը, որ նոյնպէս համաձայն է մեր մտքի հետ, որ խմբագրական մասնատուրով անդամների մեծ մասի ընտրութիւնը անաւոյղ էր և որ նրանց թուում չէ երևում հայ գրականութեան մէջ յայտնի ոչ մի անուն: Միայն մի բանի մէջ սխալվում է ուսու լրագիրը, ասելով որ Ն. Միրզայեան և Գ. Միրզայեան ընտրվեցան խմբագրական մասնատուրով մէջ և անտեղի կերպով ծաղրում է այդ երկու պարսններին, թէ նրանք իբր թէ ոչինչ ուրիշ արժանատիութիւն չունեն, բայց հարատուութեանց: Նախ Միրզայեան երկու եղբայրները ընտրվեցան

—Ուրիշ ճար չը կայ, պէտք է լալային մեկի հետ պատկեր:

—Այդ բոլորովին չի ազատի նրան: Ի՞նչ կարող է պատկերած կինն էլ ամուսնի գրկից դուրս քաշել և տանել:

—Պէտք է մի այնպիսի մարդու հետ պատկեր, որ լալային այստեղ չը պահէ, այլ վեր առնէ և տանէ մի ուրիշ երկիր, ոտաց Սառան:

—Շատ գեղեցիկ միտք է, պատասխանեց Հայրապետը.—բայց ճիշտից կարելի է գտնել մի այսպիսի մարդ: Գու գիտես, որ մեր գիւղացիներից ոչ մէկը չի յանձն առնի մի այսպիսի ամուսնութիւն, նրա համար որ կը վախենայ և կը մտածէ, եթէ լալային տանելու լինի մի ուրիշ երկիր, այն ժամանակ բէկը նրա տանը կրկ կը տայ և նրա բոլոր ազգականներին սրից կանցկացնէ: Ռ՞՞՞ է այն մարդը, որ յանձն առնէր այս տեսակ զոհաբերութիւններ:

—Մարդը պատրաստ է, պատասխանեց Սառան ուրախ ձայնով:

—Ռ՞՞ է:

—Վարդանը: Հայրապետի տխուր դէմքը ընդունեց խիստ ուրախ արտայայտութիւն, երբ Սառան սկսեց պատմել նրան, իւր այն օրվայ տեսածը տան պարակլի ծառերի մէջ, թէ սրպէս վարդանը և լալայի գրք կախառնվել էին միմեանց հետ, համարվում էին և խոստանում էին միմեանց մշտական սէր:

—Այդ լաւ է, ասաց Հայրապետը.—վարդանը, միայն վարդանը կարող է ազատել լալային:

Արևը արդէն մայր էր մտել: Երկու ամուսինները վերկայացան և սկսեցին շտապել դէպի տուն: Հանապարհիկ Հայրապետը մտածում էր այն բանի վրա, թէ ինչ պատրաստութիւններ է տեսնում բէկը, ինչու համար է նա զենքեր բաժանում: Միթէ այդ մի սարսափելի ձեռնարկութեան նախապատրաստութիւն չը...

